ԴԱՇՆԱՅԻՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՍՏԱՎԱՅՐ

**Դաշնային նախագահ Յոախիմ Գաուկի խոսքը**

**հավարտ հայոց, արամեացիների և Պոնտոսի հույների նկատմամբ իրականացված ցեղասպանության հիշատակման առիթով Բեռլինի Տաճարում մատուցված էկումենիկ պատարագի**

**23-ը ապրիլի 2015թ.**

**Բեռլինի Տաճար**

Նախ երախտիքի խոսք եմ հղում Ձեզ, պարոնա'յք, Ձե'զ, որ հանձնառություն ունեք Ձեր եկեղեցիների անունից Բեռլինի կենտրոնում այս պատարագը մատուցելու, և որին մեզ հրավիրել եք: Իմ ներկայությունն այստեղ վկայում է, որ ներկայիս Գերմանիայում պետությունն ու քաղաքական պատասխանատուներն իրենց մշտապես պարտավորված են զգում ազնվորեն, համաչափ և ինքնաքննադատաբար վերաիմաստավորելու անցյալը:

Այս ժամին, տիկնա'յք և պարոնա'յք, մենք ոգեկոչում ենք հայ ժողովրդի հարյուրհազարավոր այն զավակներին, ովքեր մեկ դար առաջ ծրագրված և կանոնավոր սպանությունների զոհ դարձան:

Կին թե տղամարդ, երեխա թե ծեր՝ անխտիր տեղահանվեցին, բռնեցին աքսորի ճամփան, առանց որևէ պաշտպանության ու առանց սննդի քշվեցին տափաստաններ ու անապատներ, ողջ-ողջ այրվեցին, տանջամահ եղան, դաժանաբար ծեծվեցին ու սպանվեցին:

Այս ծրագրված և հաշվարկված հանցագործությունը հայերին պատուհասեց մեն միակ պատճառով՝ նրանք հայ էին: Նմանապես այն պատուհասեց իրենց բախտակիցներին՝ ասորիներին կամ արամեացիներին և Պոնտոսի հույներին:

Մեր նորօրյա գիտակցությամբ և անցած տասնամյակների քաղաքական ու հումանիտար սարսափների հեռապատկերին մեզ համար այսօր ակնհայտ է՝

հայերի ճակատագիրը քսաներորդ դարն այնքան սարսափելի կերպով բնորոշող զանգվածային բնաջնջումների, էթնիկ զտումների, տեղահանությունների, և անգամ ցեղասպանությունների պատմության օրինակ է:

Այս հանցագործությունները կատարվեցին պատերազմների ստվերում. պատերազմը նաև օրինականություն ապահովեց այս հանցանքների համար: Այսպես պատահեց հայերի հետ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, և այսպես պատահեց այլ վայրերում հետագա հարյուր տարիներին և ցայսօր ժամանակ առ ժամանակ տեղի է ունենում շատ այլ կրոնական և ազգային փոքրամասնությունների հետ: Նրանց լրտեսներ էին անվանում, օտար իշխանությունների գործակալներ, ազգային միաբանությանը սպառնացող խառնակիչներ, դասակարգային կամ ռասսայական թշնամիներ, հիվանդության օջախ՝ ազգի մարմնում:

Մենք ոգեկոչում ենք զոհերին, որպեսզի նրանք և նրանց ճակատագիրը չմոռացվեն: Մենք հիշեցնում ենք նրանց մասին՝ ի սեր իսկ նրանց: Սա ամենից առաջ հիշեցում է յուրաքանչյուր մարդու անօտարելի արժանապատվության մասին: Այս արժանապատվությունը չի կարող ոչնչացվել, բայց նրա դեմ անվերջ կարելի է մեղանչել՝ արհամարհելով ու տրորելով այն:

Մենք հիշեցնում ենք զոհերի մասին, որպեսզի նրանք ոգեկոչման մեջ վերստին ձայն ստանան, որ պատմվի նրանց պատմությունը, այն պատմությունը, որն ամեն կերպ պետք է մոռացվեր:

Այո', մենք հիշատակում ենք զոհերին նաև ի սեր մեզ: Մեր սեփական մարդկայնությունը մենք կարող ենք պահպանել միայն այն դեպքում, եթե ոչ միայն հաղթողներն ուղղորդեն պատմությունն ու մեր՝ ապրողներիս հիշողությունը, այլև կեղեքվածներն ու կորուսյալները, մատնվածներն ու ոչնչացվածները:

Զոհերի հիշատակումը, սակայն, լիարժեք չի լինի, եթե չխոսվի նաև ոճրագործների մասին: Առանց ոճրագործների զոհեր չեն լինում: Ոճրագործները՝ Օսմանյան կայսրության այն ժամանակվա ղեկավարները և նրանց գործակիցները, ինչպես առհասարակ լինում է ռասսիստական, էթնիկ կամ կրոնական շարժառիթներով զանգվածային սպանդի բոլոր կազմակերպիչների դեպքում, մոլեռանդորեն համոզված էին իրենց գործողության ճշմարտության մեջ:

Երիտթուրքական գաղափարախոսությունն էթնիկ առումով համասեռ, կրոնական առումով միասնական ազգային պետության մեջ էր փնտրում կործանվող Օսմանյան կայսրության մեջ կողք կողքի և իրար հետ ապրող տարբեր ազգերի ու կրոնների գոյակցության անհետացող ավանդույթի այլընտրանքը: Տարբերակումն ըստ ազգային խմբերի, էթնիկ զտումներն ու տեղահանությունները հաճախ էին խոսում քսաներորդ դարի սկզբին կազմավորվող ազգային պետությունների մութ կողմերի մասին: Բայց միատարրության ու մաքրապաշտության գաղափարախոսությունները ոչ հազվադեպ են հանգուցալուծվում մերժման ու տեղահանման և որպես վերջնահետևանք՝ սպանության հանցանքի մեջ: Օսմանյան կայսրությունում դրանից թափ առավ ցեղասպանական մի ընթացք, որի զոհը դարձավ հայ ժողովուրդը:

Մենք այժմ քննարկում ենք, թե որ անվանումն առավել կպատշաճեր հարյուր տարի առաջ տեղի ունեցածին: Աչալուրջ ենք, սակայն, որ այս քննարկումը չսահմանափակվի մեկ եզրույթին վերաբերվող տարբերություններով: Ամենից առաջ կարևոր է _ անգամ հարյուր տարիներ անց _ ճանաչել, ցավել և սգալ մի ժողովրդի հանդեպ ծրագրված բնաջնջումն իր ողջ սարսափելի իրականությամբ: Այլապես կկորցնենք մեր ուղենիշային կողմնացույցը և հարգանքը մեր իսկ նկատմամբ:

Եթե մենք պատմությունը գնահատելիս հասնենք փոխըմբռնման, եթե մենք բարձրաձայնենք անարդարությունը, անգամ եթե դա արել են մերոնք, եթե մենք հավասարապես հավաստենք, ինչու ոչ՝ մեր կյանքի օրինակով ապացուցենք, որ հարգում ենք արդարությունն ու մարդու իրավունքները, ապա կպահպանենք զոհերի արժանապատվությունը և միասնական մարդասիրական հիմք կստեղծենք ներքին և սահմանանց համակեցության համար:

Հիշելով՝ մենք ներկայում ապրողներից ոչ ոքի մեղադրյալի աթոռին չենք զամում: Այն ժամանակվա ոճրագործներն այլևս չեն ապրում, և նրանց զավակներին ու թոռներին չպետք է վերագրվի նրանց մեղքը: Այն ինչ, սակայն, իրավացիորեն կարող են ակնկալել զոհերի հետնորդները, պատմական իրողությունների ճանաչումն ու դրանով նաև պատմական մեղքի ճանաչումն է: Այսօրվա սերնդի պատասխանատվությունն է պարտավորված զգալ վարելու այնպիսի քաղաքականություն, որը հարգի և պաշտպանի յուրաքանչյուր անհատի, ինչպես

նաև յուրաքանչյուր փոքրամասնության կյանքի իրավունքն ու մարդու իրավունքները:

Հայերի պարագայում, այսպիսով, մենք որևէ այլ սկզբունքի չենք հետևում, քան խոր մարդկային կենսափորձի սկզբունքն է. մենք կարող ենք ազատվել մեղքից, եթե խոստովանենք այն, և մենք չենք կարող ազատվել մեղքից, եթե ժխտենք այն, վանենք այն մեզնից կամ թերարժևորենք այն: Մենք Գերմանիայում դժվարությամբ և մասամբ ամոթալի հապաղումով սովորեցինք հիշատակել նացիոնալսոցիալիզմի հանցանքները, հատկապես Եվրոպայի հրեաների դեմ հալածանքն ու նրանց բնաջնջումը: Սովորեցինք նաև տարբերել ոճրագործների մեղքը, որն անվերապահորեն պետք է ճանաչվի և իր անունով կոչվի, այն պատասխանատվությունից, որը պետք է կրեն հետագա սերունդները՝ հանուն պատշաճ հիշատակման:

Հայ ժողովրդի սպանության հիշատակումը նաև այստեղ մեզ մոտ՝ Գերմանիայում, իր խոր իմաստն ու հստակ արդարացումն ունի: Մեր կողքին ապրում են հայերի և թուրքերի սերունդներ՝ ամեն մեկն իր առանձին պատմությամբ: Խաղաղ գոյակցության համար, սակայն, կարևոր է, որ ամենքը կողմնորոշվեն անցյալի վերաիմաստավորման միևնույն լուսավորական սկզբունքներով:

Այս պարագայում նաև մենք՝ գերմանացիներս, ընդհանուր առմամբ վերստին պետք է անդրադառնանք վերաիմաստավորման գործին, հատկապես՝ երբ խոսքը հայերի հանդեպ իրականացված ցեղասպանության մեջ ունեցած մեր բաժին պատասխանատվությանը, որոշ հանգամանքներում՝ մեղսակցությանն է վերաբերում:

Այդ գերմանացի զինվորականներն էին, որ մասնակցում էին տեղահանությունների կազմակերպմանն ու որոշ դեպքերում նաև իրագործմանը[1]: Հայերի հանդեպ

---

1 «Գերմանացի զինվորականները մասնակցում էին տեղահանությունների կազմակերպմանն ու մասամբ նաև կազմակերպմանը: Ի տարբերություն թուրք ազգայնականների՝ նրանց համար էթնիկ փաստարկներն այնքան նշանակություն չունեին: Նրանց համար կարևորը ռազմական հաշվարկներն էին, հատկապես՝ ռուսների դեմ արևելաանատոլական ճակատի ամրացումը և գերմանաօսմանյան դաշինքի ամրապնդումը»: Յորն Լեոնհարդ, «Պանդորայի արկղը. Առաջին համաշխարհային պատերազմի պատմություն», Մյունխեն 2014, էջ 413

իրականացվող գործողությունների մեջ վերջիններիս բնաջնջումը հստակորեն կանխազգացած գերմանացի դիտորդների և դիվանագետների զգուշացումները շրջանցվում ու անտեսվում էին: Քանզի Գերմանական կայսրությունը չէր ցանկանում վտանգել հարաբերություններն իր օսմանյան դաշնակցի հետ: Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգը, ում հատուկ հանձնակատարն ամենայն մանրամասնությամբ տեղեկացրել էր հայերի դեմ հետապնդումների մասին, 1915թ. դեկտեմբերին կարճ ու հատու նշում է. «Մեր միակ նպատակը Թուրքիային մինչև պատերազմի ավարտը մեր կողքին պահելն է, կարևոր չէ, թե այդ ընթացքում հայերը կկործանվեն, թե ոչ»: Դժվար է լսել այս, բայց մենք միաժամանակ վերհիշում ենք, որ հենց գերմանացիներն էին նաև, ամենից առաջ՝ մեծ նվիրյալ Յոհաննես Լեփսիուսը, ում հրապարակախոսական գործունեության շնորհիվ հայոց տառապանքը հայտնի դարձավ ողջ աշխարհին:

Սանիտարական ծառայության սպա Արմին Թեոֆիլ Վեգներն էր, ով իր լուսանկարներով վավերացրեց և պատերազմի ավարտից հետո Գերմանիայում կազմակերպած իր դասախոսություն-ցուցադրություններով պատմեց հայոց ճակատագրի մասին: Ավստրիացի Ֆրանց Վերֆելը, ով իր «Մուսա լեռան քառասուն օրը» վեպով գեղարվեստական հուշակոթող կանգնեցրեց այն դիմադրությանը, որ հայ ժողովուրդը ցույց տվեց իր հանդեպ ծրագրված բնաջնջմանը: Լույս տեսնելուց հետո գիրքը շատ արագորեն՝ 1933թ. արգելվեց. Բիալիստոկի և Վիլնիուսի հրեական գետտոներում, սակայն, այն կարդում էին, ընդ որում՝ որպես կանխանշան հրեաներին սպասվելիք դեպքերի: Երկու կողմն էլ՝ թե' Երրորդ Ռայխի գրաքննիչները, թե' հրեաներն, այսպիսով, ճշգրտորեն ընկալել էին գիրքն ու դրանում պատմվող պատմությունը:

Երբ Ադոլֆ Հիտլերն իր՝ 1939թ. օգոստոսի 22-ի մարտական հրամանում գերմանական ցամաքային զորախմբերի գլխավոր հրամանատարներին հրամայում է հարձակվել լեհերի վրա՝ բացատրելով իր պլանները՝ «առանց խղճալու մահվան գիրկն ուղարկել լեհական ծագմամբ և լեհախոս թե' տղամարդ, թե' կին, թե' երեխայի», հավաքական անտարբերության ակնկալիքով իր խոսքը եզրափակում է հռետորական այս հարցով. «Ո՞վ է այսօր դեռ խոսում հայերի բնաջնջումից»[2]:

---

[2] վկայությունները Յորն Լեոնհարդի, նույն տեղում, էջ 415

Մե'նք ենք խոսում այդ մասին: Մե'նք: Այսօր էլ՝ հարյուր տարի անց, մենք հստակ գիտակցումով խոսում ենք այդ մասին. այդ մասին և մարդկության ու մարդկային արժանապատվության դեմ կատարված այլ հանցանքների մասին: Մենք դա անում ենք, որպեսզի Հիտլերն իրավացի դուրս չգա: Մենք անում ենք դա, որպեսզի ոչ մի բռնապետ, ոչ մի բռնակալ և նաև ոչ ոք, ով օրինական է համարում էթնիկ զտումները, չկարողանա ակնկալել, որ իր գործողությունները կանտեսվեն ու կմոռացվեն:

Այո', մենք շարունակում ենք խոսել նաև տհաճ տեղյակության, պատասխանատվությունից խուսափելու և հին մեղքի մասին: Մենք դա չենք անում՝ կապվելու համար ճնշող անցյալին, այլ՝ որպեսզի արթուն լինենք և ժամանակին արձագանքենք, երբ բնաջնջումն ու ահաբեկչությունը սպառնում են մարդկանց ու ժողովուրդներին:

Լավ է, երբ մենք միասնաբար ենք հիշում՝ առանց դավանանքային ու կրոնական, լեզվական, էթնիկ ու պետական սահմաններով բաժանված լինելու: Այսօր մենք երախտապարտ ենք ողջ աշխարհից ստացվող հիշատակման և հաշտեցման յուրաքանչյուր ազդակի համար: Հատկապես ուրախ եմ թուրք և հայ ժողովուրդների միջև փոխըմբռնման և միմյանց ընդառաջ գալու յուրաքանչյուր քաջալերող դրսևորման համար:

Ոչ ոք չպետք է վախենա ճշմարտությունից: Առանց ճշմարտության չկա հաշտեցում: Միայն միասնաբար մենք կարող ենք հաղթահարել այն, ինչ տրոհել ու տրոհում է մեզ: Միայն միասնաբար մենք կարող ենք լավ ապագա ունենալ այս մեկ ու մեզ բոլորիս վստահված աշխարհում: